

ՍԱՆՄԱՐԱՆԸ  
ԱՆՉՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ  
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆ Է. - Սաղմունս 126-150

---



*Թարգմանեց ու խմբագրեց՝*  
ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ≈ ¶ ð à ô Â ° ≈ Û Î à Ô Ø Æ ò

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպատակները մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Ø³βi áó ì ³Ñ; Ô³½³ñ»³Υ

ê² ÔØàê² ð² ÛÀ  
² ÛÒÛ² Î² Û °ô Ð² ê² ð² Î² ò  
² ÔúÂØÆ Ð² Ø² ð

ԱՊՂԱՌՈՒ 126 [125]

Ով սերմանում է արտասուելով

- Կցորդ. Պո-վյարադե-եցիվ ինչ Աեդր իմ վոթո-թի-նեներո-մ,  
Ե-Ես մի արվայո-թի-նե Եմ պարապո-մձեր Ըամար (Հմմտ. Ղկս 22, 28-29):
- Կամ. Եթե մասնակցո-մ Ենվ Քրիստոսի շարժարանվներին,  
մասնակցելո- Ենվ նաե- Սրա վառ-վին (Հմմտ. Հռմ 8, 17):
- Կամ. Ինչպե՞ս մասնակցե՞լ շարժարանվներին,  
մասնակցե՞լ լինելո- նաե- միտիտարո-թեանը (Հմմտ. 2Կր 1, 7):
- Կամ. Ով Անշո-մ է, պո-ղե Ըա-աւո-մյա-ի քեհական կեանվի Ըամար,  
որպե՞սյն նրանով ո-րախանայ ով սերմանո-մ է Ե ով Անշո-մ (Հմմտ. Յվհ 4, 36):
- Կամ. Վերջ մեծ Գործեր կարարեց ինչնո-մ Ե սո-բե Ե Իր Անո-նը (Ղկս 1, 49):

<sup>1</sup> Աստիճանների երգ:

Երբ Տէրը ետ էր բերում Սիրոնից տարուած գերիներին,  
մեզ թուում էր՝ թէ երազում ենք.

<sup>2</sup> մեր բերանը լի էր ծիծաղով,  
մեր լեզուն՝ երգերով:

«Մեծ գործեր կատարեց Տէրը նրանց համար», –  
ասում էին հեթանոսները.

<sup>3</sup> մեծ գործեր կատարեց մեր համար Տէրը,  
բերկրանքով լիացրեց մեզ:

<sup>4</sup> Վերադարձիր, Տէր, եւ մենք կը վերադառնանք  
ինչպէս անապատի հեղեղատները.

<sup>5</sup> ովքեր սերմանում են արտասուելով,  
կը հնձեն ուրախութեան մէջ:

<sup>6</sup> Գնալիս քայլում են արտասուելով  
եւ նետում են սերմը.  
Վերադառնալիս գալիս են երգելով  
եւ կրելով բերում են իրենց հունձքը:



ԱՊՂԱՌՈՒ 127 [126]

Որդիները Տիրոջ պարգևն են

- Կցորդ. Որ ե-իցե մի Բան կաո-ո-ցո-աթ է որ ե-իցե մեկի կողմից,  
Բայց Աստ-աթ Ինվն է՝ որ ոտեղծելէ ամեն Բան (Եբր 3, 4):
- Կամ. Ո՛չ ով քնկո-մ է, ո՛չ Ելով ջրո-մ է, իրենից ինչ որ մի Բան է ներկայացնո-մ,  
այլ Աստ-աթ, որ աճեցնո-մ է (Հմմտ. 1Կր 3, 7):

կամ. Ամեն բարի պարգև-գալիս է ի վերո-սրբ-իջնում ելոյսի Հօրից (Հմմտ. Յկբ 1, 17):  
 կամ. Լինի թե արթուն եմ, Լինի թե վնաս չեմ,  
 մենք ապրում ենք Յիսուս Քրիստոսի հետ (Հմմտ. 1Թս 5, 10):  
 կամ. Մարդը չի կարող վերցնել ոչինչ, եթե նրան դա երկնից արուած չէ (Յվհ 3, 27):  
 կամ. Ով մեռում է ինչնում, շար պարող է բերում.  
 ոչինչ չէ վերող անելաուանց ինչ (Հմմտ. Յվհ 15, 5):

<sup>1</sup> **Աստիճանների երգ: Սողոմոնի:**

Եթէ Տէրը չի կառուցում տունը,  
 ի դուր են յոգնում շինարարները.  
 Եթէ Տէրը չի պահպանում քաղաքը,  
 ի դուր է հսկում պահակը:

<sup>2</sup> Ի դուր էք առաջտեան շուտ արթնանում,  
 երեկոյեան ուղացում ձեր հանգիստը,  
 յոգնութեամբ վաստակուած հաց ուտելու համար.  
 Տէրն այն պարգևում է իր մտերիմին, երբ վերջինս ննջում է:

<sup>3</sup> Ահա որդիները. Տիրոջ սեփականութիւնն են,  
 որովայնի պտուղը. Նրա պարգևն է:

<sup>4</sup> Ինչպէս նիզակները հզօրի ձեռքում,  
 այնպէս են երիտասարդ տարիքում ունեցած որդիները:

<sup>5</sup> Երանելի է այն մարդը, որ նրանցով լի ունի իր կապարճը.  
 Եթէ իր թշնամիների առջեւ դուրս է գալիս դռան սեմին,  
 չի ենթարկուի ստորացած մնալու վտանգին:



ԱՊՂԱՌԱ 128 [127]

Կինը. խաղողի պտղառատ այգի

Կցորդ. Ես ասում եմ. այս խորհուրդը մեծ է,  
 վերաբերում է Քրիստոսին եւ Եկեղեցուն (Հմմտ. Եփս 5, 32):  
 կամ. Տեսայ սուրբ լազալը, նոր Երուսաղէմը,  
 իր վեասայն համար զարդարուած հարսն ման պարրաստ (Հմմտ. Յյա 21, 2):  
 կամ. Գու՛՛՛, եղբայրներ, Իսահակն նման՝ խոսքումն զաւակներ է՛ (Գղտ 4, 28):  
 կամ. Չեր պարիւր յեր յերով աշխարհու մեջ րեմէ՛ (Հմմտ. 1Թս 4, 11):

<sup>1</sup> **Աստիճանների երգ:**

Երանելի է մարդը, որ երկնչում է Տիրոջից  
 եւ ընթանում է Նրա ճանապարհներով.

<sup>2</sup> Դու կ'ապրես քո ձեռքերի աշխատանքով,  
 երանելի կը լինես եւ բարիքի մէջ:

<sup>3</sup> Քո կինը, տանդ ներսում,  
 նման է խաղողի պտղառատ այգու.  
 որդիներդ, սեղանիդ շուրջը,  
 ձիթենու ծառերի պէս են.

<sup>4</sup> ասհա, այսպէս է օրհնուում նա՝  
ով երկնհնում է Տիրոջից:

<sup>5</sup> Տէրը թող օրհնի քեզ Սիրոնից.  
Թող որ դու կարողանաս տեսնել Երուսաղէմի բարօրութիւնը  
կեանքիդ բոլոր օրերում:

<sup>6</sup> Թող որ դու կարողանաս տեսնել քո որդիների որդիներին:  
Թող խաղաղութիւն լինի Իսրայէլի վրայ:



## ԱՊՂԱՌՈՒ 129 [128]

Չգերակշռեցին իմ դէմ

Կցորդ. Աշխարհում դու՛ն է զո՛ւրիշների ներ ո՛ւնէ՛լ, բայց ի՛նչալեբո՛ւ եցէ՛լ,  
ես յաղթեցի աշխարհին (Յղհ 16, 33):

Կամ. Երանի արդարութեան Համար Հալաժո՛ւսթներին,  
որ ո՛վհետեւ նրանցն է երկնի՛ն արժայո՛ւրիշնը (Մտթ 5, 10):

Կամ. Ով քառասորմ է Ասորթոյ կամփի Համաձայն,  
թող Հաւարարի՛մ Արարչին վարահի իր կեանի՛նը (Հմմտ. 1Պտ 4, 19):

<sup>1</sup> **Աստիճանների երգ:**

Երիտասարդութիւնիցս ի վեր շատ հալածեցին ինձ, –  
թող ասի Իսրայէլը, –

<sup>2</sup> երիտասարդութիւնիցս ի վեր շատ հալածեցին ինձ,  
բայց չգերակշռեցին իմ դէմ:

<sup>3</sup> Թիկունքիս վրայ հերկեցին գութանով,  
խոր ակօսներ փորեցին.

<sup>4</sup> բայց Տէրը, որ արդար է,  
կործանեց ամբարիշտների լուծը:

<sup>5</sup> Ամօթահար են եւ ետ են դառնում  
Սիրոնի թշնամիները.

<sup>6</sup> նրանք նման են տանիքի վրայ աճած խոտին,  
հազիւ ծլում է՝ արդէն չորանում:

<sup>7</sup> Հնձուորի ձեռքը նրանով չի լցւում,  
ո՛չ էլ այն հաւաքողի գիրկը.

<sup>8</sup> նրանցից ոչ մէկին անցորդները չեն ասելու.  
«Թող Տիրոջ օրհնութիւնը ձեր վրայ լինի»:

Մենք ձեզ օրհնում ենք Տիրոջ Անունով:



- Կցորդը. Նրա անունը Յիսուսն էր զնեւ ,  
որովհետեւ Նա կը փրկէ Իր ժողովուրդին իրենց մեղքերից (Մտթ 1, 21):
- կամ. Իր սիրեցեալ Որդոս շնորհիւ մենք ունենք փրկութիւնը  
եւ թողութիւնը մեղքերի (Հմմտ. Եփս 1, 6-7):
- կամ. Մենք մի գաղափար չգրանցեալ ունենք Հօր մօտ ,  
որ իսկութեան զոր է մեր մեղքերի համար (Հմմտ. 1Թմհ 2, 1-2):
- կամ. Պահպանեցէ՛ք յեզ Լսութոյ սիրոյ մէջ , սպասելով Տիրոջ ողորմութեանը (Թդ 21):

<sup>1</sup> **Աստիճանների երգ:**

- Ի խորոց աղաղակում եմ Քեզ, Տէր,
- <sup>2</sup> Տէր, լսիր իմ ձայնը.  
ականջներդ թող ուշադիր լինեն  
աղաչանքիս ձայնին:
- <sup>3</sup> Եթէ Դու յիշես յանցանքները, Տէր,  
Տէր, ո՞վ կարող է ապրել.
- <sup>4</sup> Բայց Քո մօտ է ներումը,  
որ սփռում, ներշնչում է Քո երկիւղը:
- <sup>5</sup> Յուսացել եմ Տիրոջը, յոյսով է իմ հոգին,  
փափաքում է Նրա խօսքը.
- <sup>6</sup> Հոգիս սպասում է Տիրոջը,  
աւելի՛ քան պահակներն արշալոյսին.  
Հատ աւելի՛ քան պահակներն արշալոյսին,
- <sup>7</sup> Իսրայէլը թող սպասի Տիրոջը:
- Այո՛, Տիրոջ մօտ է ողորմութիւնը,  
գերառատ՝ փրկութիւնը.
- <sup>8</sup> Նա է՝ որ փրկելու է Իսրայէլին  
նրա բոլոր յանցանքներից:



- Կցորդը. Սովորեցէ՛ք ինչնից , որ հեղեմէւ սրտով խոնարհ ,  
եւ հանգիստ կը Գործէ՛ք յեր կեանքերի համար (Մտթ 11, 29):
- կամ. Եթէ մանուկներն նման չգառնա՞նք , չէ՛ք մորնի երկնքի արժայոթիւնն (Մտթ 18, 3):
- կամ. Ով կը խոնարհուի ինչպէս մի մանուկ ,  
նա է ամենամեծը երկնքի արժայոթիւնն (Հմմտ. Մտթ 18, 4):
- կամ. Ով Լսութոյ արժայոթիւնը չի ընդունում ինչպէս մի մանուկ ,  
նրանից ներս չի մորնի (Մրկ 10, 15):
- կամ. Մի՛ ցանկացէ՛ք չափազանց մեծ իրահանութիւններ ,  
այլ հանուած եղէ՛ք պէտք խոնարհները (Հմմտ. Հում 12, 16):

կամ. Ու վճարչրացնում է իր անձը, կը խոնարհուի,  
իսկ ու վճարչրացնում է իր անձը, կը վճարչրացուի (Մտթ 23, 12):

կամ. Մորաթին մանուկներին նման՝ փափակեցէ՛վ Հոգեւոր մաշտոյ կաթը (1 Պտ 2, 2):

<sup>1</sup> **Աստիճանների երգ: Դաւթի:**

Տէր, իմ սիրտը չի հպարտանում,  
աչքերս չափազանց բարձր չեն նայում.  
մեծ իրողութիւններ փնտռելով չեմ ապրում,  
ո՛չ էլ մեծ գործեր, իմ ուժերից վեր:

<sup>2</sup> Ո՛չ, ես արգելակում եմ իմ սիրտը,  
հանդարտութեան ու լռութեան մէջ.  
ինչպէս մանուկը մօր գրկում,  
ինձնում հանգիստ է իմ սիրտը:

<sup>3</sup> Սպասիր Տիրոջը, Իսրայէլ,  
այժմ եւ յաւիտեան:



ԱՄՂԱՌԱ 132 [131]

Տիրոջ եւ չի քաշում Իր խօսքը

Կցորդ. Խոստման Համայնայն, Աստուած Պատիւն սերնդից մին փրկիչյարոցեց Իսրայէլի Համար.  
Յիսուսին (Հմմտ. Գրծ 13, 23):

կամ. Աստուած նրան պալտ է Պատիւն՝ իր Հօր Գահը,  
եւ նրա թագաւորութիւնը վախճան չի ունենալու (Հմմտ. Ղկս 1, 32-33):

կամ. Աստուած Պատիւն երդուելէր՝  
նրա սերնդից մէկին նստեցնել նրա Գահին (Հմմտ. Գրծ 2, 30):

<sup>1</sup> **Աստիճանների երգ:**

Յիշիր, Տէր, Դաւթին  
եւ նրա ամբողջ հեղութիւնը.

<sup>2</sup> Տիրոջ առջեւ կատարած նրա երդումը,  
Յակոբի Հզօրին տուած նրա ուխտը.

<sup>3</sup> «Չեմ մտնելու վրանից ներս, ուր բնակւում եմ,  
չեմ ելնելու հանգստեանս անկողնու վրայ.

<sup>4</sup> քուն չեմ շնորհելու աչքերիս,  
ո՛չ էլ նինջ՝ արտեւանունքներիս.

<sup>5</sup> մինչեւ մի վայր չգտնեմ Տիրոջ համար,  
մի բնակատեղի՝ Յակոբի Հզօրին»:

<sup>6</sup> Իմացանք՝ որ տապանակը Եփրաթայում էր,  
այն գտանք ժաարի դաշտում.

<sup>7</sup> մտնենք Նրա բնակութեան վայրը,  
ծունկի գանք Նրա ոտքերի պատուանդանի առաջ:

<sup>8</sup> «Ե՛լ, Տէր, դէպի հանգստեանդ վայրը,  
 Դու եւ զօրութեանդ տապանակը.  
<sup>9</sup> քահանաներդ թող արդարութեամբ զգեստաւորուեն,  
 ուրախութեամբ թող ցնծան հաւատացեալներդ.  
<sup>10</sup> Ի սէր Դաւթի՝ Քո ծառայի,  
 մի՛ մերժիր դէմքը Քո Մեսիայի»:



<sup>11</sup> Տէրը երգուել է Դաւթին  
 եւ երբեք ետ չի քաշի Իր խօսքը.  
 «Քո գահին նստեցնելու եմ մէկին,  
 որ պտուղը լինի քո որովայնի»:

<sup>12</sup> Եթէ որդիներդ պահեն Իմ դաշինքը  
 եւ ուսուցումը, որ յայտնեցի իրենց,  
 նրանց որդիները սերնդէ սերունդ  
 յաւիտեան կը բազմեն քո գահի վրայ»:

<sup>13</sup> Որովհետեւ Տէրն ընտրել է Սիոնը,  
 այն կամեցել է որպէս Իր մնայուն օթեւան.

<sup>14</sup> «Ահա՛ Իմ հանգիստն ընդմիշտ,  
 բնակատեղին, որ ես կամեցայ»:

<sup>15</sup> Օրհնելու, օրհնելու եմ նրա ուտելիքը,  
 հացով յագեցնելու եմ նրա աղքատներին.

<sup>16</sup> փրկութեամբ զգեստաւորելու եմ նրա քահանաներին,  
 ցնծալու, ցնծալու են նրա հաւատացեալները»:

<sup>17</sup> Այնտեղ մի ուժ եմ յարուցելու Դաւթի համար,  
 Իմ Մեսիայի համար պատրաստելու եմ մի ջահ.

<sup>18</sup> ամօթով եմ ծածկելու նրա թշնամիներին,  
 բայց նրա վրայ պայծառ փայլելու է թագը»:



## ԱՊՂԱՌԱ 133 [132]

Միասին ապրել եղբայրների նման

- Կցորդ.** Եթէ սեր ունենալ միմեանց հանդէպ,  
 ամեն ով կ'իմանայ՝ որ իմ աշակերտներն են (Յվհ 13, 35):
- Կամ.** Հաւատացեալները յարաբերում են երբեք չափազանց  
 հացի բեկման եւ աղօթի ներքին մեջ (Հմմտ. Գրծ 2, 42):
- Կամ.** Հաւատացեալները միայն մեկ սիրտ եւ հոգի ունենան,  
 եւ ամեն ինչ նրանց մեջ ընդհանուր էր (Հմմտ. Գրծ 4, 32):
- Կամ.** Ոչ ով չի հանդէպ ոչ մեկ պարտի մի՛ ունեցել,  
 եթէ ոչ միայն՝ փոխադարձ սիրտ պարտի (Հռմ 13, 8):
- Կամ.** Եթէ մեռնի ընթացում եմք լոյսի մեջ,  
 հաղորդում ենք մեռնի միմեանց հետ (Հմմտ. 1Յվհ 1, 7):

կամ. Սիրելի մեծանց, որովհետեւ «էրն Աստուծոց է (1Յվհ 4, 7):

կամ. Ուր երկու համ երեւի ճոգի ի մի եւն Հասակուելիմ Անուանով,  
եւ այնքեղեմ, նրանց մեջ (Մտթ 18, 20):

<sup>1</sup> *Աստիճանների երգ: Դարթի:*

Ահա, որքա՛ն գեղեցիկ է, որքա՛ն քաղցր,  
եղբայրների նման ապրել միասին:

<sup>2</sup>Նման է Ահարոնի գլխին հեղուած  
թանկարժէք ու բուրումնաւէտ իւղի,  
որ իջնում է՝ օծելով նրա մօրուքը,  
իսկ մօրուքից իջնում է մինչեւ նրա զգեստի գրպանները:

<sup>3</sup>Նման է Հերմոնի ցօղին,  
որ իջնում է Սիոնի լեռների վրայ.  
այնտեղ է Տէրն առաքում  
օրհնութիւնն ու կեանքը յաւիտենական:



## ՍԱՂԱՌԱ 134 [133]

Միոնից թող օրհնի քեզ Տէրը

Կցորդ. Գո՛ւ՛՛՛՛ կանչուելէ՛՛՛՛ օրհնելու,

որպէս ժառանգութիւն սրանալու Համար օրհնութիւնը (Հմմտ. 1Պտ 3, 9):

կամ. Երանի այն ժառանգերին, որոնց Տէրն արթուն կը գտնի իր գալստեանը (Ղկս 12, 37):

կամ. Գո՛ւ՛՛՛՛ կանչուելէ՛՛՛՛ Երա թողր ժառանգեր,

գո՛ւ՛՛՛՛ որ երկնչումէ՛՛՛՛ Երանից, փոփրեր եւ մեծեր (Յյտ 19, 5):

<sup>1</sup> *Աստիճանների երգ:*

Դուք բոլորդ, օրհնեցէք Տիրոջը,  
Տիրոջ ծառաներ,  
որ գիշերներն ամբողջ  
հսկում էք Տիրոջ օթեւանում:

<sup>2</sup>Բարձրացրէք ձեր ձեռքերը դէպի Սրբութիւնը  
եւ օրհնեցէք Տիրոջը.

<sup>3</sup>«Սիոնից թող օրհնի քեզ Տէրը,  
նա է ստեղծել երկիրքն ու երկիրը»:

[այս սաղմոսով աւարտում է Երուսաղէմ բարձրանալու («Աստիճանների» կոչուող) երգերի շարքը. Մղմ 120-134]



Կցորդը. Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուածն է եւ յաւերեւեական կեանքը :  
 Փոփոխել որդեակներ , զԳոշացել կոտորելից (Հմմտ. 1Յվհ 5, 20-21):  
 կամ. Արեւելեանից դարձնել էլ եկել Աստուծոն ,  
 կենդանի եւ ճշմարիտ Աստուծոն թառայելու համար (1Թս 1, 9):  
 կամ. Գոտարժանի ես , մեր Տէր էւ Աստուած ,  
 ընդունելու փառք , պարիւ եւ զօրութիւն (Հմմտ. Յյտ 4, 11):  
 կամ. Գոտայն ժողովորդն էլ , որ Աստուած յետէ է բերել՝  
 աւերարանելու համար Իր սխանչելի Գործերը (Հմմտ. 1Պտ 2, 9):

<sup>1</sup> Ալէլուիա :

Գովեցէք Տիրոջ Անուներ ,  
 գովեցէք այն , Տիրոջ ծառաներ .  
<sup>2</sup> Դուք՝ որ հսկում էք Տիրոջ օթեւանում ,  
 մեր Աստուծոյ օթեւանի գաւիթներում :

<sup>3</sup> Գովեցէք Տիրոջը , բարի է Տէրը ,  
 երգեցէք Նրա Անուանը , քաղցր է .

<sup>4</sup> Տէրն ընտրել է Յակոբին ,  
 Իսրայէլին դարձրել է Իր տիրոյթը :

<sup>5</sup> Ես գիտեմ՝ որ Տէրը մեծ է ,  
 մեր Տէրն աւելի՝ քան բոլոր աստուածները .

<sup>6</sup> այն ամէնն՝ ինչ Տէրը կամենում է ,  
 կատարում է երկնքում եւ երկրի վրայ ,  
 ծովում եւ բոլոր անդունդներում :

<sup>7</sup> Հորիզոնից բարձրացնում է ամպերը ,  
 կայծակներով իջեցնում է անձրեւը ,  
 Իր շտեմարաններից արձակում է քամիները :

<sup>8</sup> Հարուածեց Եգիպտոսի առաջնեկներին ,  
 մարդկանցից մինչեւ բոլոր անասունները .

<sup>9</sup> առաքեց նշաններ ու հրաշքներ  
 քո մէջ , ո՛վ Եգիպտոսի երկիր ,  
 փարաւոնի եւ նրա բոլոր ծառաների դէմ :

<sup>10</sup> Հարուածեց բազմաթիւ ժողովուրդների ,  
 ոչնչացրեց հզօր միապետների .

<sup>11</sup> ամուրհացիների թագաւոր Սեհոնին եւ Բասանի թագաւոր Օգին  
 եւ Քանանի բոլոր թագաւորութիւններին .

<sup>12</sup> նրանց երկիրը որպէս ժառանգութիւն տալու համար ,  
 որպէս ժառանգութիւն Իսրայէլին՝ Իր ժողովրդին :



<sup>13</sup> Տէր , Քո Անուներ յաւերեւեական է ,  
 սերնդէ սերունդ՝ յիշատակդ , Տէր .

<sup>14</sup> որովհետեւ Տէրն արդարութիւն է անում իր ժողովրդին, մխիթարութիւն է բերում իր բոլոր ծառաներին:

<sup>15</sup> Հեթանոսների կուռքերը ոսկի են ու արծաթ, մարդու ձեռքերով են շինուած.

<sup>16</sup> բերան ունեն, բայց չեն կարող խօսել, աչքեր ունեն, բայց չեն կարող տեսնել.

<sup>17</sup> ականջներ ունեն, բայց չեն կարող լսել, քիթ ունեն, բայց չունչ չկայ նրանց բերանում.

<sup>18</sup> ով պատրաստել է դրանք, դրանց պէս թող դառնայ, բոլոր նրանք՝ ովքեր հաւատում են դրանց:

<sup>19</sup> Իսրայէլի տուն, օրհնիր Տիրոջը, Ահարոնի տուն, օրհնիր Տիրոջը.

<sup>20</sup> Ղեւիի տուն, օրհնիր Տիրոջը, Տիրոջ հաւատացեալներ, օրհնեցէք Տիրոջը:

<sup>21</sup> Սիրոնից թող օրհնեալ լինի Տէրը, Նա՛ որ բնակւում է Երուսաղէմում:

Ալէլուիա:



## ԱՊՂԱՌԱ 136 [135]

Նրա սէրը յաւիտենական է

Կցորդ. Մենք յո՛ւսացել ենք կենդանի Ասրժո՛ւն, որ իր կիշն է բոլոր մարդկանց (Հմմտ. 1Տմ 4, 10):

Կամ. Ամեն բան կարարուել է Խօսքի միջոցով. ինչ նրանում գոյութիւն ունի, կեանք է (Հմմտ. Յվզ 1, 3-4):

Կամ. Թող երախտագիտութիւն մարդուց ունի Ասրժո՛ւն, որ մասնակից է դարձնում մեզ յանձնին՝ Յիսուսի կարարած Իր յաղթանակին (Հմմտ. 2Կր 2, 14):

Կամ. Երգեցէ՛ք Ասրժո՛ւն, սաղմոսներով, օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով որդանց երախտագիտութիւն մարդուց ունի Նրան (Հմմտ. Կղս 3, 16):

Կամ. Մենք շնորհեցինք Ասրժո՛ւն, այլ Ինչն է՝ որ սիրեց մեզ (1Յվզ 4, 10):

<sup>1</sup> Երախտագիտութիւն մատուցէք Տիրոջը, Նա բարի է, Նրա սէրը յաւիտենական է.

<sup>2</sup> երախտագիտութիւն մատուցէք աստուածների Աստծուն, Նրա սէրը յաւիտենական է.

<sup>3</sup> երախտագիտութիւն մատուցէք տէրերի Տիրոջը, Նրա սէրը յաւիտենական է:

<sup>4</sup> Միայն Նա գործեց մեծամեծ հրաշքներ, Նրա սէրը յաւիտենական է.

<sup>5</sup> Իմաստութեամբ ստեղծեց երկիրքը, Նրա սէրը յաւիտենական է.

<sup>6</sup> ջրերի վրայ տարածեց երկիրը, Նրա սէրը յաւիտենական է:

- <sup>7</sup> Մտեղծեց մեծ լուսատուները,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>8</sup> արեւը՝ ցերեկուան իշխելու համար,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>9</sup> գիշերուան իշխելու համար՝ լուսինն ու աստղերը,  
Նրա սէրը յաւիտենական է:
- <sup>10</sup> Յանձինս առաջնեկների՝ հարուածեց Եգիպտոսին,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>11</sup> այդ երկրից դուրս բերեց Իսրայէլին,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>12</sup> հզօր ձեռքով եւ տարածուած բազուկով,  
Նրա սէրը յաւիտենական է:
- <sup>13</sup> Երկու մասի բաժանեց Կարմիր ծովը,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>14</sup> նրա միջով անցկացրեց Իսրայէլին,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>15</sup> նրա խորքն ընկղմեց փարաւոնին եւ նրա զօրքը,  
Նրա սէրը յաւիտենական է:
- <sup>16</sup> Առաջնորդեց իր ժողովուրդին անապատի միջով,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>17</sup> հարուածեց ահարկու միապետներին,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>18</sup> սպանեց հզօր թագաւորներին,  
Նրա սէրը յաւիտենական է:
- <sup>19</sup> Ամուրհացիներին թագաւոր Սեզոնին,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>20</sup> եւ Բասանի թագաւոր Օգին,  
Նրա սէրը յաւիտենական է:
- <sup>21</sup> Նրանց երկիրը որպէս ժառանգութիւն տուեց,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>22</sup> որպէս ժառանգութիւն Իսրայէլին՝ իր ծառային,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>23</sup> յիշեց մեզ մեր ստրկութեան մէջ,  
Նրա սէրը յաւիտենական է:
- <sup>24</sup> Ազատեց մեզ մեր թշնամիներից,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>25</sup> կենդանի ամէն էակի պարգեւում է հաց,  
Նրա սէրը յաւիտենական է.
- <sup>26</sup> երախտագիտութիւն մատուցէք երկնքի Աստծուն,  
Նրա սէրը յաւիտենական է:



Կցորդք. Բանին դեռ ապրում էնվ մարմնում, ախորի մեջ էնվ, Տիրոջից Բեռն (2Կր 5, 6):

Կամ. Ասորո-աթյի շէյ մեթ Բաթելոնին, նրան քաղո-Համար Իր ցասման Գինո-Գա-աթը (Հմմտ. Յյտ 16, 19):

Կամ. Պո-րա եկ, ժողովո-րդ իմ, Բաթելոնից. մի՛ մասնակցիր նրա մեղվերին (Հմմտ. Յյտ 18, 4):

Կամ. Աս-յ ճեղ, Բաթելոն, ղիթիարի լաղա՛վ, միայն մեկ ժամում Հասել է լո գադասգանը (Հմմտ. Յյտ 18, 10):

Կամ. Պարճաւը, որի Համար աշխարհը մեղշի ճանաչում, այն է՝ որ շի ճանաչել Ասորո-ն (Հմմտ. 1Յվհ 3, 1):

<sup>1</sup> Բաբելոնի գետերի երկայնքին նստում էինք ու լալիս, յիշելով Սիրոնը.

<sup>2</sup> այդ երկրի ուռենիների ճիւղերին կախել էինք մեր տաւիղները:

<sup>3</sup> Տեղահանողները պահանջում էին երգի խօսքեր, մեր դաժան գերեվարողները՝ մեղեդիներ. «Երգեցէք մեզ համար Սիրոնի մի երգ»:

<sup>4</sup> Ինչպէ՞ս կարող էինք Տիրոջ երգերը երգել օտար երկրում.

<sup>5</sup> եթէ մոռանամ քեզ, Երուսաղէմ, թող մոռանայ ինձ իմ աջը:

<sup>6</sup> Թող լեզուս քիմքիս կպչի, եթէ կորցնեմ քո յիշատակը, եթէ Երուսաղէմը չհամարեմ իմ ամենամեծ ուրախութիւնը:

<sup>7</sup> Յիշիր, Տէր, Եդոմի որդիներին, երբ հասնի Երուսաղէմի օրը. նրանք աղաղակում էին. «Կործանեցէք այն, կործանեցէք այն հիմքից»:

<sup>8</sup> Կործանարար Բաբելոն, երանի՛ նրան՝ ով կը հատուցի քեզ չարիքը, որ արեցիր մեզ.

<sup>9</sup> երանի՛ նրան՝ ով կը բռնի քո մանուկներին ու նրանց կը ջախջախի՝ խփելով քարին:



Կցորդը. Նա՛՛ ով յեզնո՛ւմ ահա ելէ Բարի Գործը, այն կը Հասցնի իր աւարտին (Հմմտ. Փլպ 1, 6):

կամ. Ըմէն Բան Դող կարարո՛ւի Տէր Յիսուսի Անոնով,  
Նրա մեջոցով երախրագիտութիւնն մարոցելով Հայր Աստուծոն (Կղս 3, 17):

կամ. Միշտ աղօթեցէ՛ք, ամէն Բանի Համար երախրագիտութիւնն մարոցելէ՛.  
«ա՛՛ է յեզ Համար Աստուծոյ կամփնի Յիսուս Քրիստոս (1Թս 5, 17-18):

<sup>1</sup> **Դալթի:**

Երախտագիտութիւն կամ մատուցում Քեզ, Աստուած, ամբողջ սրտով,  
աստուածային հաւաքում երգում եմ Քեզ,

<sup>2</sup> խոնարհում եմ Սրբութեանդ օթեւանի առջեւ:

Քո Անուանն եմ ես երախտագիտութիւն մատուցում,  
Քո սիրոյ եւ Քո հաւատարմութեան համար.  
որովհետեւ Քո խոստումը դարձրիր  
աւելի մեծ՝ քան որեւէ պատիւ.

<sup>3</sup> այն օրը, որում աղաղակեցի, պատասխանեցիր ինձ,  
աւելացրեցիր իմ սրտի ուժը:

<sup>4</sup> Երկրի թագաւորները երախտագիտութիւն են մատուցում Քեզ, Տէր,  
ուսկնդրելով բերանիդ խօսքերը,

<sup>5</sup> նրանք երգում են Տիրոջ ճանապարհներում.  
«Որբա՛ն մեծ է Տիրոջ փառքը»:

<sup>6</sup> Բարձրեալ է Տէրը, բայց տեսնում է խոնարհին,  
հեռուից զանազանում է հպարտին.

<sup>7</sup> եթէ տրամութեան խորքերն եմ ընկնում,  
Նա ինձ ապրեցնում է թշնամու գայրոյթից:

Դու տարածում ես ձեռքդ եւ աջդ փրկում է ինձ,

<sup>8</sup> Տէրն իմ համար ամբողջացնելու է իր գործը.  
Տէր, Քո սէրը յաւիտենական է,  
Քո ձեռքերի գործը մի՛ անտեսիր:



Կցորդը. Աստուած աւելի մեծ է՝ ինչն մեր սիրտը, եւ ամէն Բան Գիտէ (1ԹվՀ 3, 20):

կամ. Ո՛վ Աստուծոյ իմաստութեան խորութիւնն.  
որ՛իսն անհասանելի են նրա ճանապարհները (Հմմտ. Հում 11, 33):

կամ. Տէր, Դու ամէն Բան Գիտես. Դու Գիտես, որ սիրում եմ Իրեզ (ԹվՀ 21, 17):

կամ. Աստուած Հեռո՛ւ չէ մեզնից իրաւական շիրից. մենք Միանում ենք ապրում,  
շարժում եւ Գոյութիւնն ունենք (Հմմտ. Գրծ 17, 27-28):

կամ. Աստուծոյ խօսքը կենդանի է եւ արդիւնաւէտ,  
ինչն ում է սրտի պահպանմանն ու մրաշուովները (Հմմտ. Եբբ 4, 12):

կամ. Չկայ մի արարած, որ կարողանայ խափնուել Աստուծոյ առաջ,  
այլամէն թան մերկ ու թացայայտ է Սրբա աշխարհն (Հմմտ. Եբբ 4, 13):

կամ. Բոլոր եկեղեցիներն իմանալու են,  
որ ես նա եմ՝ որ փննում ե խորհերն ու սիրտը (Հմմտ. Յյտ 2, 23):

<sup>1</sup> **Երգչախմբի ղեկավարի համար: Գալթի: Սաղմոս:**

Տէր, Դու ինձ քննում ես եւ ճանաչում ես ինձ,

<sup>2</sup> Դու գիտես՝ թէ երբ եմ ես նստում եւ երբ ոտքի կանգնում,  
Դու հեռուից զանազանում ես իմ դիտաւորութիւնները:

<sup>3</sup> Դու հսկում ես իմ վրայ, երբ քայլում եմ եւ երբ հանգստանում,  
ներկայ ես իմ բոլոր ճանապարհներում.

<sup>4</sup> Դեռեւս չարտասանուած խօսքերը  
դրանք բոլորն արդէն ճանաչում ես, Տէր:

<sup>5</sup> Կանխում ես ինձ, հետեւում, գրկում,  
եւ իմ վրայ հանգչեցնում ես Քո ձեռքը.

<sup>6</sup> Քո ճանաչողութիւնն իմ համար հրաշալի է,  
չափազանց ներթափանցող է, այն չեմ ըմբռնում:

<sup>7</sup> Ո՛ւր գնալ հեռու Քո Հոգուց,  
ո՛ւր փախչել հեռու Քո Դէմքից.

<sup>8</sup> Եթէ բարձրանում եմ երկինք, Դու այնտեղ ես,  
եթէ իջնում եմ դժոխք, ահա Դու:

<sup>9</sup> Եթէ վերցնում եմ արշալոյսի թեւերը,  
բնակուելու համար ծովերից այն կողմ,

<sup>10</sup> այնտեղ նոյնպէս առաջնորդում է ինձ ձեռքդ,  
աջդ հասնում է ինձ այնտեղ ներքեւում:

<sup>11</sup> Եթէ ասում եմ. «Թող պատի ինձ խաւարը»,  
գիշերն իմ չորս կողմը դառնում է լոյս.

<sup>12</sup> խաւարը նոյնպէս Քո առաջ խաւար չէ,  
գիշերը լուսաւոր է ցերեկուայ նման,  
Քո համար խաւարը փայլում է ինչպէս լոյսը:



<sup>13</sup> Դու ես, որ ստեղծել ես ներաշխարհս,  
հիւսել ես ինձ մօրս որովայնում.

<sup>14</sup> Ընդունում եմ, որ մի հրաշք է էութիւնս,  
երախտագիտութիւն եմ մատուցում Քեզ  
ինձ այսպէս ստեղծելուդ համար.  
Քո գործերը հրաշալի են,  
սիրտս շատ լաւ է ճանաչում դրանք:

<sup>15</sup> Երբ կազմաւորում էի ծածուկ,  
երբ հիւսում էի երկրի խորքում,  
ոսկորներս Քեզնից թաքնուած չէին.

<sup>16</sup> Կազմակերպիչը տեսնում էին ինձ՝ ես դեռ չամբողջացած,  
իմ բոլոր օրերը գրուած էին գրքում,  
արդէն հաշուած էին, երբ նրանցից մէկն անգամ չկար:

<sup>17</sup> Որքա՛ն դժուար են ինձ համար Քո մտածումները,  
որքա՛ն մեծ է նրանց թիւն, Աստուած.

<sup>18</sup> Եթէ հաշուում եմ դրանք, աւագից աւելի շատ են,  
եթէ դրանք վերջացած եմ կարծում, դեռեւս Քեզ հետ եմ:

<sup>19</sup> Ո՛վ Աստուած, երանի՛ թէ ոչնչացնէիր չարագործին:  
Հեռացէ՛ք ինձնից, արիւնհասեղ մարդիկ:

<sup>20</sup> Խօսում են Քո մասին, բայց ունայնութիւն են ասում,  
քաղաքներդ քաշում են դէպի կռապաշտութիւն:

<sup>21</sup> Մի՞թէ չպէտք է ատեմ նրան՝ ով Քեզ ատում է,  
արհամարհեմ Քո հակառակորդներին, Տէր.

<sup>22</sup> անհաշտ ատելութեամբ ես նրանց ատում եմ,  
իմ անձնական թշնամիներն եմ ես նրանց համարում:

<sup>23</sup> Քննիր ինձ, ո՛վ Աստուած, եւ ճանաչիր իմ սիրտը,  
փորձիր ինձ եւ ճանաչիր իմ ցանկութիւնները.

<sup>24</sup> տես՝ թէ արդեօք այլասերուած է իմ ընթացքը,  
եւ առաջնորդիր ինձ յաւիտենականութեան ճանապարհով:



## ԱՊՂԱՌԱ 140 [139]

Տէրն արդարութիւն է անում խեղճին

Կցորդ. Արեւելեան Գրոհներն իմն է, — ասում է Տէրը, —

ես եմ՝ որ արալու եմ փոխակապողական (Հում 12, 19):

Կամ. Բրիտանոս, Իր արաւայանփնէրում, Նէր սպառնում, այլ իր պատասխանը  
յանձնում էր Մրան՝ ով պարտում է արդարութեամբ (Հմմտ. 1 Պտ 2, 23):

Կամ. Մենի մեր մարմնում միշտ է ամենուր կրում ենք Յիսուսի մահը (Հմմտ. 2 Կր 4, 10):

<sup>1</sup> **Երգչախմբի ղեկավարի համար: Սաղմոս: Դատի:**

<sup>2</sup> Չարագործից ազատիր ինձ, Տէր,  
պաշտպանիր ինձ բռնաւոր մարդուց.

<sup>3</sup> բոլոր նրանցից՝ ովքեր չարիք են խորհում  
եւ ամէն օր սանձազերծում պատերազմներ.

<sup>4</sup> բոլոր նրանցից՝ ովքեր սրում են իրենց օձային լեզու  
եւ շուրթերի վրայ ունեն իժի թոյն:

<sup>5</sup> Ամբարիշտի ձեռքերից պաշտպանիր ինձ, Տէր,  
պաշտպանիր ինձ բռնաւոր մարդուց.  
բոլոր նրանցից՝ ովքեր նիւթում են իմ անկումը,

<sup>6</sup> գողոզ պարծենկոտներից, որ թակարդ են պատրաստում ինձ.  
ճանապարհիս վրայ ձգել են մի լար,  
իմ դէմ լարել են թակարդ ու որոգայթ:

<sup>7</sup> Աստուծո՞ւմ եմ Տէրոջը. «Դու ես իմ Աստուծո՞ւմ»,  
ուրեքն դիր աղաչանքիս ձայնին.

<sup>8</sup> Տէր Աստուծո՞ւմ, Դու ես ուժը՝ որ փրկում է ինձ,  
մարանչման օրը հովանի եղիր գլխիս.

<sup>9</sup> մի՛ գիշիր, Տէր, ամբարիշտի ցանկութիւններին,  
մի՛ նպաստիր նրա ծրագրերին, կը պարծենայ:

<sup>10</sup> Ինձ շրջափակողները գլխին  
թող ընկնի իրենց իսկ նենգութիւնների ծանրութիւնը.

<sup>11</sup> նրանց վրայ անձրեւի նման թող թափուեն հրավառ ածուխներ,  
թող գահավիժեն փոսի մէջ եւ այլեւս ոտքի կանգնել չկարողանան.

<sup>12</sup> չարախօսը թող չտեւի երկրի վրայ,  
բռնաւորին իր իսկ չարիքը թող հրի դէպի կործանում:

<sup>13</sup> Ես գիտեմ, որ Տէրն արդարութիւն է անում խեղճին,  
պաշտպանում է աղքատի իրաւունքը.

<sup>14</sup> արդարներն օրհնելու են Քո Անունը,  
երեսիդ առջեւ բնակուելու են հաւատացեալները:



## ԱՊՂԱՌՈՒ 141 [140]

Աղօթքս խունկ է երեսիդ առաջ

Կցորդ. Աստուծոյ արդարութիւնը նեղելու է նրանց՝ ուղիներ նեղում են յեզ.

յեզ, որ նեղութեան մեջ էի, բերելու է մեծարութիւն (Հմմտ. 2Թս 1, 6-7):

Կամ. Հայր մեր, մի՛ գար մեզ փորձութեան, այլ փրկիր մեզ շարից (Հմմտ. Մտթ 6, 13):

Կամ. Բո՛ւրո՛ւմնա՛ւեք ծո՛ւխը, որ բերի աղօթիչներին հետ միասին,  
հրեշտակի յեռնով բարձրացա՛ւ Աստուծոյ առաջ (Թյտ 8, 4):

<sup>1</sup> **Մաղմոս: Գալթի:**

Տէր, կանչում եմ Քեզ, շտապիր դէպի ինձ,  
ուրեքն դիր ձայնիս, երբ Քեզ եմ աղաղակում.

<sup>2</sup> աղօթքս խունկի նման թող բարձրանայ երեսիդ,  
երեկոյեան զոհի մատուցման նման թող բարձրանան իմ ձեռքերը:

<sup>3</sup> Մի պահապան դիր իմ բերանին, Տէր,  
հսկիր շրթունքներիս դուռը.

<sup>4</sup> մի՛ թող, որ սիրտս կքուի դէպի չարը,  
մեղսակից դառնայ չարերի գործին:

Ձեմ ուզում ճաշակել նրանց դիւթանքները,

<sup>5</sup> արդարը թող բարութեամբ յանդիմանի ինձ եւ ուղղի.  
Թող իմ գլխին չմերժի այս թանկարժէք իւղը,  
չարի դիմաց՝ չի դադարելու իմ աղօթքը:

<sup>6</sup> Նրանց խօսքերը թող փշրուեն ժայռի վրայ,  
որովհետեւ ուրախանում էին, երբ լսում էին իմ հեծեծանքը.

<sup>7</sup> «Մեր ոսկորները նման են վարած ու կտոր կտոր եղած հողի, ցիրուցան են եղել մինչեւ դժոխքի շեմը»:

<sup>8</sup> Տէր Աստուած, դէպի Քեզ են ուղղուած իմ աչքերը, Դու ես իմ ապաւէնը, խնայիր իմ կեանքը.

<sup>9</sup> պաշտպանիր ինձ թակարդից, որ լարել են իմ առաջ, նենգութիւններից նրանց՝ ուղքեր խորհում են չարիք.

<sup>10</sup> իրենց իսկ լարած թակարդի մէջ թող բռնուեն ամբարիշտները, իսկ ես անվնաս կ'անցնեմ նրանց միջով:



## ԱՊՂԱՌԱ 142 [141]

Հոգիս նուաղում է

Կցորդ. Դու-՛ն փախչելու- չե՛լ, ինչ մենակ թողնելով.

Բայց ես մենակ չեմ, որովհետեւ չայրը ինչ հետ է (Հմմտ. Յվհ 16, 32):

Կամ. Երանի՛ր ննջեցեալներին, որ մաճանո-մ են ի Տէր .

Հանգստանալու են իրենց յոգնո-թի-ններից (Հմմտ. Յյտ 14, 13):

Կամ. Եթե՛ ապրո-մ են՛ի, ապրո-մ են՛ի Տիրոջ Համար .

Եթե՛ մաճանո-մ են՛ի, մաճանո-մ են՛ի Տիրոջ Համար (Հում 14, 8):

Կամ. Դու-՛ն, եղբայրներ, մեր սրտո-մ է՛լ,

միասին մաճանալու- եւ միասին ապրելու- Համար (Հմմտ. 2Կր 7, 3):

<sup>1</sup> Մասիի: Գալթի: Երբ քաղանձաւում էր: Աղօթք:

<sup>2</sup> Բարձր ձայնով ես աղաղակում եմ Տիրոջը, բարձր ձայնով ես աղաչում եմ Տիրոջը.

<sup>3</sup> Նրա առջեւ սփռում եմ իմ հեծեծանքը, Նրա առջեւ պատմում եմ իմ տրտմութիւնը:

<sup>4</sup> Երբ հոգիս նուաղում է, այո՛, Դու ճանաչում ես իմ ընթացքը. արահետի վրայ, որով քայլում էի, թակարդ լարեցին ինձ համար:

<sup>5</sup> Նայիր իմ չորս կողմը եւ տես, ոչ ոք չի կամենում ճանաչել ինձ. փախուստի հնարաւորութիւններ ինձ համար չկան, իմ կեանքի համար ոչ ոք չի մտահոգւում:

<sup>6</sup> Ես աղաղակում եմ դէպի Քեզ, Տէր, եւ ասում եմ. «Դու ես իմ ապաւէնը, Դու ես իմ միակ բարիքը որդիների այս երկրում»:

<sup>7</sup> Ուշադիր եղիր արտասուելուս ձայնին, որովհետեւ ծայր աստիճան նուաղած եմ. հալածիչներիցս ազատիր ինձ, նրանք ինձնից շատ աւելի ուժեղ են:

<sup>8</sup> Կեանքս դուրս հանիր բանտից,  
որպէսզի երախտագիտութիւն մատուցեմ Քո Անուանը.  
չուրջբոլորս սեղմ հաւաքուելու են արդարները,  
բարիքի համար, որ արեցիր ինձ:



## ԱՊՂԱՌԱ 143 [142]

Թող առաջնորդի ինձ սիրոյ Քո Հոգին

Կցորդ. Յիսուս, յիշիր ինձ, երբ կը զաս արձայութեամբդ (Ղկս 23, 42):

Կամ. Մարդը չի արդարանում գործերով,  
այլ մեծնայն Յիսուս Քրիստոսի հանդէպ ունեցած հասարկով (Հմմտ. Գղտ 2, 16):

Կամ. Հայր, հեռացրո՛ւ ինձնից այս թաշակը,  
Թայց թող որ Քո կամովը կարարո՛ւի, ո՛չ իմը (Հմմտ. Ղկս 22, 42):

### <sup>1</sup> Մաղմոս: Դաւթի:

Տէր, լսիր իմ աղօթքը,  
ականջ դիր իմ աղաչանքներին,  
հաւատարմութեանդ ու արդարութեանդ համաձայն՝ պատասխանիր ինձ:

<sup>2</sup> Դատաստան մի՛ մտիր ծառայիդ հետ,  
կենդանի ոչ մէկ էակ չի կարող արդարանալ Քո առաջ:

<sup>3</sup> Թշնամին հալածում է իմ կեանքը,  
ոտնակոխ է անում կեանքս մինչեւ գետին.  
Խաւարոտ վայրերում է ստիպում ինձ բնակուել,  
ինչպէս մեռեալները, մեռեալներն ընդմիշտ:

<sup>4</sup> շունչս հանգչում է ինձնում,  
ինձնում նուազում է սիրտս:

<sup>5</sup> Վերյիշում եմ երբեմնի օրերը,  
կրկին խորհրդածում եմ բոլոր գործերիդ մասին,  
ձեռքերիդ գործերի մասին եմ մտածում նորից:

<sup>6</sup> ձեռքերս տարածում եմ դէպի Քեզ,  
ինչպէս Քեզ ծարաւած երկիր:

<sup>7</sup> Շուտով, պատասխանիր ինձ, Տէր,  
չունչս հասել է վախճանին.  
ինձնից մի՛ թաքցրու երեսդ,  
կը լինեմ մէկը նրանցից՝ ովքեր իջնում են փոսի մէջ:

<sup>8</sup> Առաւօտուանից զգացրու ինձ Քո սէրը,  
որովհետեւ Քեզ եմ ես հաւատում, ո՛վ Տէր.  
ճանաչել տուր ինձ ճանապարհը, որով պէտք է քայլեմ,  
որովհետեւ Քեզ եմ ես ընծայում իմ կեանքը:

<sup>9</sup> Թշնամիներիցս ազատիր ինձ, Տէր,  
Քո մօտ եմ ես ապահով զգում ինձ:

<sup>10</sup> սովորեցրու ինձ կատարել Քո կամքը,  
որովհետեւ Դու ես իմ Աստուածը:

բարութեամբ թող առաջնորդի ինձ Քո Հոգին  
արահետներով հարթ եւ ուղիղ:

<sup>11</sup> Տէր, ի սէր Քո Անուան,  
ապրեցրու ինձ Քո արդարութեամբ,  
տրտմութիւնից դուրս հանիր իմ կեանքը.

<sup>12</sup> սիրոյդ համաձայն՝ ոչնչացրու թշնամիներիս,  
կորստեան մատնիր իմ բոլոր հակառակորդներին,  
որովհետեւ ես Քո ծառան եմ:



## ԱՊՂԱՌԱ 144 [143]

Խոնարհեցրու երկինքը եւ իջիր

Կցորդ. Սա՛ւ է յաղթանակը, որ պարտութեան մասնէց աշխարհին. մեր Ըստարժը (1Յվհ 5, 4):

Կամ. Մեր մղաժ պարտազմի զենվերը մարմնական չէն,  
այլ՝ ամբողջ-նշաներ կործանելու՝ իրենց պարտութիւնն ունեն Մարտոց (2Կր 10, 4):

Կամ. Մեր պայվարը մարմնի եւ արեան դեմ չէ, այլ շար Բողոնների դեմ (Հմմտ. Եփս 6, 12):

Կամ. Զգեսպարտոցէ՛լ Մարտոյ պատճենը,  
սպասանայի նշան-նշաններն դիմանալու՝ Ըստար (Հմմտ. Եփս 6, 11):

Կամ. Մարտաժ նրանց աշվերից շորացնելու՝ է ամեն արտասով.  
այլեւս չի լինելու՝ մահ, ո՛չ ողբ, ո՛չ վիշտ (Հմմտ. Յյտ 21, 4):

Կամ. Բարի պարտազմը մղեցի.  
այժմ ինչ սպասում է արդարութեան պսակը (Հմմտ. 2Տմ 4, 7-8):

### <sup>1</sup> Դաւթի:

Օրհնեալ է Տէրը, վէմն իմ,  
Նա իմ ձեռքերը վարժեցնում է պատերազմի,  
իմ մատները՝ զէնքի արուեստին:

<sup>2</sup> Նա է իմ սէրը, իմ պաշտպանութիւնը,  
իմ յենարանն ու իմ ազատարարը,  
իմ վահանն ու իմ ապաստարանը.  
Նա է, որ իմ ժողովուրդին ենթարկում է ինձ:

<sup>3</sup> Ի՞նչ է մարդը, որ Դու ճանաչես նրան, Տէր,  
մարդկային էակը, որ Դու նրան հոգաս.

<sup>4</sup> մարդն ա՛յլ ինչ էէ, եթէ ոչ միայն՝ մի շունչ,  
նրա օրերը նման են ստուերին, որ թեքւում է:

<sup>5</sup> Խոնարհեցրու երկինքը եւ իջիր, Տէր,  
հպուիր լեռներին եւ իսկոյն հրով կը բռնկուեն.

<sup>6</sup> փայլակներդ արձակիր եւ ցիրուցան արա հակառակորդին,  
նիզակներդ նետիր եւ ներշնչիր երկիւղ:

<sup>7</sup> Ի վերուստ դէպի ինձ պարզիր Քո ձեռքը,  
խլիր ինձ ջրերի յորձանքից,  
փրկիր ինձ կռապաշտների ձեռքից.

<sup>8</sup> նրանց բերանը դատարկ բաներ է խօսում,  
կեղծիքի աջ է նրանց աջը:



<sup>9</sup> Ո՛վ Աստուած, մի նոր երգ եմ Քեզ համար երգում,  
Քեզ համար նուագում եմ տասնալարեան տաւղով:

<sup>10</sup> Դու փրկութիւնը պարգեւում ես Մեսիա Թագաւորներին  
եւ փրկում ես Քո ծառայ Դաւթին:

Ազատիր ինձ սրից, որ սպանում է,

<sup>11</sup> փրկիր ինձ կռապաշտների ձեռքից:

Նրանց բերանը դատարկ բաներ է խօսում,  
կեղծիքի աջ է նրանց աջը:

<sup>12</sup> Մեր որդիները թող նման լինեն ծառերին,  
խնամուած ու մշակուած՝ իրենց երիտասարդութիւնից սկսած:  
մեր դուստրերը թող նման լինեն սիւներին,  
քանդակուած՝ զարդարելու համար տաճարը:

<sup>13</sup> Եւ թող լիովի լինեն մեր շտեմարանները,  
ամէն տեսակի պտուղներով գերառատ:  
հազարաւոր եւ բիւրաւոր թող լինեն մեր երամակները,  
թող բազմանան մեր հովիտներում:

<sup>14</sup> Հզօրները կ'ենթարկուեն մեզ,  
այլեւս երբեք չեն լինի ներխուժում ու աքսոր,  
այլեւս երբեք՝ ողբ հրապարակներում:

<sup>15</sup> Երանի՛ այն ժողովուրդին, որն այսպէս լիացած է,  
երանի՛ այն ժողովուրդին, որն որպէս Աստուած՝ Տիրոջն ունի:



## ԱՊՂԱՌԱ 145 [144]

Տէրը դանդաղ է զայրոյթի, մեծ է սիրոյ մէջ

Կցորդ. Աշխարհի Բագաւորութիւնը մեր Տիրօջինն է եւ Իր Քրիստոսինը:

Սա Բագաւորելու է յաւիտեանս յաւիտենից (Հմմտ. Յյտ 11, 15):

Կամ. Եկե՛ք, իմ Հօր օրհնեալներ,

ժառանգեցե՛ք յեւրամար պատրաստութեանը (Մտթ 25, 34):

Կամ. Աստուած խորահանութիւնն չի պնտման յերի միջեւ,

այլ ո՛վ երկնում է Իրենից՝ Իրեն հաճոյ է (Հմմտ. Գրծ 10, 34-35):

Կամ. Ո՛վ երկնում է Աստուծոյ եւ կարարում է Սրբա կամէ՛ր,

մենք գիտենք՝ որ Աստուած լսում է նրան (Հմմտ. Յվզ 9, 31):

Կամ. Մեծ է զարմանալի են Քո գործերը,

արդար է ճշմարիտ են Քո ճանապարհները (Հմմտ. Յյտ 15, 3):

<sup>1</sup> **Գովգ: Դայթի:**

Մեծարում եմ Քեզ, Աստուած իմ, իմ Թագաւոր,  
յաւիտեան օրհնում եմ Քո Անունը:

<sup>2</sup> օրհնում եմ Քեզ օր ըստ օրէ  
եւ յաւիտեան գովում եմ Քո Անունը.

<sup>3</sup> Տէրը մեծ է եւ արժանի է գովքի,  
Նրա մեծութիւնն անհնարին է չափել:

<sup>4</sup> Մեկ սերունդը միւսին պատմում է Քո գործերը,  
աւետարանում է Քո սքանչելիքները.

<sup>5</sup> Ես խորհրդածում եմ հրաշքներիդ խօսքերը,  
հիանում եմ Քո զեղեցկութեամբ եւ Քո փառքով:

<sup>6</sup> Պատմւում է Քո ահարկու զօրութիւնը  
եւ ես հռչակում եմ Քո մեծութիւնը.

<sup>7</sup> յիշում է Քո մեծ բարութիւնը,  
ուրախութեամբ աղաղակում է Քո արդարութիւնը:

<sup>8</sup> Տէրը կարեկցող է եւ բազմագութ,  
դանդաղ՝ զայրոյթի եւ մեծ՝ սիրոյ մէջ.

<sup>9</sup> Տէրը բոլորի նկատմամբ բարի է,  
կարեկցող է բոլոր արարածների հանդէպ:



<sup>10</sup> Թող գովեն Քեզ բոլոր արարածներդ,  
թող օրհնեն Քեզ երկրպագուներդ, Տէր.

<sup>11</sup> Թող հռչակեն արքայութեանդ փառքը,  
թող աւետարանեն Քո սքանչելիքները:

<sup>12</sup> Թող մարդկանց ծանօթացնեն Քո հրաշքները,  
արքայութեանդ պայծառութիւնն ու փառքը.

<sup>13</sup> Քո արքայութիւնը յաւիտենական արքայութիւն է,  
Քո տէրութիւնը՝ սերնդից սերունդ:

<sup>14</sup> Տէրը թիկունք է կանգնում նրան՝ ով մօտ է ընկնելու,  
կորացած ամէնքին ուղղում է մէջքը.

<sup>15</sup> բոլորի աչքերը սպասում են Քեզնից  
եւ Դու նրանց կերակրում ես իրենց ժամանակին.

<sup>16</sup> Երբ բացում ես Քո առատութեամբ լի ձեռքը,  
Դու բարութեամբ յագեցնում ես կենդանի բոլոր էակներին:

<sup>17</sup> Տէրն արդար է իր բոլոր ճանապարհներում,  
հաւատարիմ է իր բոլոր գործերում.

<sup>18</sup> Տէրը մօտ է ամէնքին, որ կանչում են իրեն,  
ամէնքին, որ կանչում են իրեն անկեղծութեամբ:

<sup>19</sup> Կատարում է իրենից երկնչողների փափաքը,  
լսում է նրանց աղաղակը եւ փրկում նրանց.

<sup>20</sup> Նա հսկում է իրեն սիրողների վրայ,  
Տէրը բնաջնջում է բոլոր ամբարիշտներին:

<sup>21</sup>Թող իմ բերանը երգի Տիրոջ գովքը,  
իւրաքանչիւր մարմին միշտ թող օրհնի Նրա սուրբ Անունը:



## ՍԱՂԱՄՈՒ 146 [145]

Տէրը հաւատարիմ է մնում յաւիտեան

- Կցորդ. Եթէ մենկ անհասարկ մենկ դառնում,*  
Յիսուս Քրիստոս մնում է հասարակ (Հմմտ. 2Տմ 2, 13):
- Կամ. Յիսուս Իր խօսով դուրս էր հանում ոգիներին*  
եւ թշնամի էր թողնում հիւանդներին (Հմմտ. Մտթ 8, 16):
- Կամ. Այրերը գեանում են, կաշերը վայլում,*  
Թորոյները մաղրում են եւ խուլերը լսում (Մտթ 11, 5):
- Կամ. Բարի լուրը աւերարանում է աղէտներին,*  
եւ երանի նրան՝ ով իմ պարճաւում չի զայնապաշտում (Հմմտ. Մտթ 11, 5-6):
- Կամ. Եթէ ես գետերին հանում եմ Աստուծոյ մասով,*  
ուրեմն չեմ վրայ հասել է Աստուծոյ արժայութիւնը (ՂԿս 11, 20):
- Կամ. Այսօր կարարուեց այս Գորութիւնը, որը լսեցի՛ք չեմ ակնջներով (Հմմտ. ՂԿս 4, 21):*
- Կամ. Աստուած սուրբ Հոգիով օծեց Յիսուսին,*  
որն ընթացաւ՝ Թարի՛վ Գործելով եւ թշնամի (Հմմտ. Գրծ 10, 38):

<sup>1</sup>Ալէլուիա:

Հողի իմ, գովիր Տիրոջը,

<sup>2</sup> ուղղում եմ գովել Տիրոջը կեանքիս ընթացքում,  
գոյութեանս ընթացքում՝ օրհնութիւններ երգել իմ Աստծուն:

<sup>3</sup> Մի՛ յուսացէք հզօրներին,  
մարդուն, որ չի կարող տալ փրկութիւն:

<sup>4</sup> Նրա շունչը հեռանում է, նա վերադառնում է երկրին,  
այդ օրը վերջանում են նրա ծրագրերը:

<sup>5</sup> Երանի՛ նրան՝ ով որպէս օգնական ունի Յակոբի Աստծուն,  
ով յուսացել է Տիրոջը՝ իր Աստծուն:

<sup>6</sup> Նա է ստեղծել երկինքն ու երկիրը,  
ծովը եւ ամէն բան, որ գոյութիւն ունի նրանցում:

Նա հաւատարիմ է մնում յաւիտեան

<sup>7</sup> եւ արդարութիւն է անում ճշուհիներին:

Նա հաց է պարգեւում քաղցածներին,  
Տէրն ազատում է բանտարկեալներին:

<sup>8</sup> Տէրը բացում է կոյրերի աչքերը,  
Տէրն ուղղում է կքուածների մէջքը.  
Տէրը սիրում է հաւատացեալներին,

<sup>9</sup> Տէրը պաշտպանում է պանդուխտներին:

Թրկունք է կանգնում որբին եւ այրին,  
բայց կորստեան է մատնում ամբարիշտների ճանապարհը:

<sup>10</sup> Տէրը թագաւորում է յաւիտեան,  
քո Աստուածը, Սիրոն, յաւիտեանս յաւիտենից:

Ալէլուիա:



ԱՊՂԱՌԱ 147 [146-147]

Քեղեցիկ է երգել, փառաբանել Տիրոջը

147ա

Տէրը կառուցում է Երուսաղէմը

Կցորդ. Աստուած շտապարեց զկայսր-թիւններ Կալ Իր մասին,  
պարգեւել զյեղանջրեաներ եւ յագեցնել զյեղեբակո-րով (Հմմտ. Գրծ 14, 17):  
Կամ. Ինչ Հաճոյ են իմ կայսր-թիւնները.  
Երբ կարեմ, յայնժամ է՝ որ ուժեղեմ (Հմմտ. 2Կր 12, 10):

<sup>1</sup> Ալէլուիա:

Բարի է երգել մեր Աստծուն,  
Նրա գովքը ներդաշնակութիւն է եւ գեղեցկութիւն:

<sup>2</sup> Տէրը կառուցում է Երուսաղէմը,  
ի մի է հաւաքում Իսրայէլի ցրուածներին.

<sup>3</sup> բժշկում է բեկուած սրտերը  
եւ փաթաթում է նրանց վէրքերը:

<sup>4</sup> Նա հաշուում է աստղերի թիւը,  
նրանք կանչում է իւրաքանչիւրն իր անուամբ.

<sup>5</sup> Տէրը մեծ է եւ հզօր,  
Նրա իմաստութիւնն անհնարին է չափել.

<sup>6</sup> Տէրը բարձրացնում է խոնարհներին,  
բայց մինչեւ գետին խոնարհեցնում է ամբարիշտներին:

<sup>7</sup> Երախտագիտութիւն երգեցէք Տիրոջը,  
տաւիղ հնչեցրէք մեր Աստծոյ համար:

<sup>8</sup> Նա ամպերով ծածկում է երկինքը,  
անձրեւ է պատրաստում երկրի համար,  
բլուրները վրայ աճեցնում է խոտը.

<sup>9</sup> սնունդ է տալիս անասուններին,  
ազուաւի փոքրիկներին, որոնք իրենից են խնդրում:

<sup>10</sup> Հաշուի չի առնում նժոյգի զօրութիւնը,  
արժէք չի ընծայում մարդու ուժին.

<sup>11</sup> Տիրոջը հաճոյ է նա՝ ով երկնչում է Իրենից,  
նրանք՝ ովքեր իր սիրոյն են յուսացել:



- Կցորդ. Ասորո՞ւս խօսվն առա՞վեց իսրայէլացիներն ,  
 խաղաղութեան Աւերարանը՝ Յիսուս -Քրիստոսի մեջոցով (Հմմտ. Գրծ 10, 36):
- Կամ. Աղօթեցէ՛վ, որպէսզի Տէրոջ խօսվն ընթանայ եւ փառաւորութի ,  
 ինչպէս Յեր մօր (Հմմտ. 2Թս 3, 1):
- Կամ. Ե՛կ, Վեղցոյց կը քամն շանուածին , Գառան Ըարանացո՞ւին (Յյտ 21, 9):

<sup>12</sup> Փառաւորիք Տիրոջը, Երուսաղէմ,  
 գովիր քո Աստծուն, ո՛վ Սինն:

<sup>13</sup> Նա զօրացնում է դռներիդ պատնէշները,  
 որդիներիդ օրհնում է քո գրկում:

<sup>14</sup> Խաղաղութիւն է հաստատում քո սահմաններում,  
 ցորենի պարարտութեամբ յագեցնում է քեզ:

<sup>15</sup> Նա Իր խոստումն առաքում է երկրի վրայ  
 եւ արագաշարժ ընթանում է Իր խօսքը:

<sup>16</sup> Իջեցնում է ձիւնը բուրդի նման,  
 փոշու նման տարածում է մշուշը:

<sup>17</sup> Նա փշրանքների նման առաքում է սառոյցը,  
 Նրա ցրտի պատճառով՝ սառում է ջուրը:

<sup>18</sup> Ետոյ կրկին առաքում է Իր խօսքը եւ հալեցնում այն,  
 Նրա քամու փչմամբ՝ հոսում են ջրերը:

<sup>19</sup> Նա յայտնում է Իր խօսքը Յակոբին,  
 Իր կամքն ու Իր վճիռները՝ Իսրայէլին:

<sup>20</sup> Երբ յայտնում է Իր վարումը ժողովուրդներից ոչ մէկի հետ,  
 նրանցից ոչ ոք չգիտէ Նրա վճիռները:

Ալէլուիա:



## ԱՊՐԱՍՈՒ 148

- Կցորդ. Մե՞ն է նախապէս ընդրուել են է ի Քրիստոս ,  
 Իր փառվի Գովելը լինելու համար (Հմմտ. Եփս 1, 11-12):
- Կամ. Ժողովուրդները փառաւորութեան Ասորո՞ւս  
 Իր ողորմութեան համար (Հմմտ. Հռմ 15, 9):
- Կամ. Փառվ Ասորո՞ւս երկնի մեծնազներին քարոզում ,  
 եւ երկրի վրայ խաղաղութեան մարդկանց , որոնց Նա սիրում է (Ղկս 2, 14):
- Կամ. Ընծայելով Ասորո՞ւս Գովաբանութեան զո՞ւ ,  
 պրո՞ղը շորթերի՝ որ դաւանում են Իր Անունը (Հմմտ. Եբր 13, 15):
- Կամ. Գովեցէ՛վ մեր Ասորո՞ւս , դու՛ր՝ Նրա Բոլոր Ժառանգեր ,  
 դու՛ր՝ որ երկնշո՞ւմ է՛ Նրանից , փո՛ղեր եւ մե՛ծեր (Յյտ 19, 5):

կամ. Մին վերջինս արեւմտեան երկնի վրայ ազազակոմէր .  
« Ալէլուիա : Փրկութիւն , փառով եւ պօրութիւն մեր Աստուծոն » (Յայտ 19, 1):

կամ. Ո՛վ երկնի վրայ , ուրախ եղէ՛ .  
նաեւ գո՛ւ՛ սրբեր , առավելալն եւ մարգարէներ (Հմմտ. Յայտ 18, 20):

<sup>1</sup> Ալէլուիա :

Գովեցէք Տիրոջը երկնքից ,  
գովեցէք Նրան երկնային բարձունքում .

<sup>2</sup> Գովեցէք Նրան , դուք բոլորդ՝ Նրա հրեշտակներ ,  
գովեցէք Նրան , դուք բոլորդ՝ Նրա զօրքեր :

<sup>3</sup> Գովեցէք Նրան , արեւ եւ լուսին ,  
գովեցէք Նրան , լուսափայլ աստղեր .

<sup>4</sup> Գովեցէք Նրան , երկնքի երկիրներ ,  
դուք՝ երկնքի վերեւում գտնուող ջրեր :

<sup>5</sup> Թող գովեն Տիրոջ Անունը ,  
Նրա հրամանով են ստեղծուել .

<sup>6</sup> Նրանց հաստատել է յաւիտեանս ընդմիշտ ,  
անյետսկոչելի կարգուկանոն է տուել :

<sup>7</sup> Գովեցէք Տիրոջը երկրից ,  
դուք՝ ծովային հրէշներ եւ բոլոր անդունդներ .

<sup>8</sup> Կրակ եւ կարկուտ , ձիւն եւ մշուշ ,  
դուք՝ քամիներ , որ կատարում էք Նրա խօսքը :

<sup>9</sup> Դուք՝ լեռներ եւ բլուրներ բոլոր ,  
պտղատու ծառեր եւ բոլոր մայրիները .

<sup>10</sup> Դուք՝ կենդանիներ եւ վայրի գազաններ ,  
սողուններ եւ թեւաւոր թռչուններ :

<sup>11</sup> Թագաւորներ եւ բոլոր ժողովուրդներ ,  
դուք՝ իշխաններ եւ երկրի դատաւորներ .

<sup>12</sup> Դուք՝ երիտասարդներ , պարմանուհիների հետ ,  
դուք՝ տարեցներ , մանուկներով հանդերձ :

<sup>13</sup> Գովեցէք Տիրոջ Անունը ,  
Նրա Անունն է միայն վեհապանծ ,  
երկրի վրայ եւ երկնքում է Նրա փառքը .

<sup>14</sup> Նա բարձրացնում է Իր ժողովուրդի զօրութիւնը ,  
Նա գովքն է բոլոր հաւատացեալների ,  
Իսրայէլի , ժողովուրդի՝ որ մերձ է Իրեն :

Ալէլուիա :



- Կցորդ. Գո՛ւն չապեւո՛ւն ե՛կ ցաաներկո՛ւն Բաճերի վրայ ,  
Ի՛նչպէլի ցաաներկո՛ւն ցեղերին պապեւո՛ւն Բաճար (Մտթ 19, 28):
- Կամ. Սրժերը պապեւո՛ւն են աշխարհը .  
Յեր կողմից ե՛՛ որ պապո՛ւնեւո՛ւն ե աշխարհը (Հմմտ. 1Կր 6, 2):
- Կամ. Երկնչէ՛կ Աստուծո՛ւց եւ փառո՛վ ցո՛ւնե՛կ Նորան ,  
որովհետեւ Բաճեւէլ Իր պապաստանի ժամը (Յյտ 14, 7):
- Կամ. Խօսո՛ւք , որ արքայասնեցի , պապեւո՛ւն ե յեզվերջին օրը (Հմմտ. Յվզ 12, 48):

<sup>1</sup> Ալէլուիա:

Մի նոր երգ երգեցէք Տիրոջը,  
գովեցէք Նրան հաւատացեալների հաւաքում.  
<sup>2</sup> Իսրայէլը թող ուրախանայ իր Արարիչով,  
Սիոնի որդիները թող ցնծան իրենց Թագաւորով:

<sup>3</sup> Թող գովեն Նրա Անունը պարերով,  
սաղմոսներ երգեն թմբուկներով ու քնարներով.  
<sup>4</sup> որովհետեւ Տէրը սիրում է իր ժողովուրդին,  
փրկութեամբ պսակում է խոնարհներին:

<sup>5</sup> Թող ցնծան հաւատացեալները փառքի մէջ,  
իրենց անկողիններից թող ելնեն ուրախութեամբ.  
<sup>6</sup> նրանց բերանին՝ Աստուծոյ գովքը,  
նրանց ձեռքերում՝ երկսայրի սուրբ:

<sup>7</sup> Արդարութիւն են անելու հեթանոսների մէջ,  
պատիժ են հասցնելու կռապաշտներին.  
<sup>8</sup> շղթաներով կապելու են նրանց թագաւորներին,  
երկաթեայ կապանքներով՝ նրանց մեծերին.  
<sup>9</sup> կատարելու են արդէն գրուած վճիռը,  
սա՛ է բոլոր հաւատացեալների փառքը:

Ալէլուիա:



- Կցորդ. Ամէն թան Նորանից ե , Նրա շնորհիւ եւ Նրա մէջ ե :  
Նրան փառո՛վ յա՛նդեանս : Ամէն (Հում 11, 36):
- Կամ. Աստուծո՛ւն , որը միայն իմաստուն է ,  
Յիսուսս Քրիստոսն մեջոցով , փառո՛վ յա՛նդեանս (Հմմտ. Հում 16, 27):
- Կամ. Աստուծո՛ւն փառո՛վ եկեղեցո՛ւմ ե Յիսուսս Քրիստոս ,  
Թուր սերունդներին ցեղերու՛նեան , յա՛նդեանս յա՛նդեանից (Հմմտ. Եփս 3, 21):
- Կամ. Բո՛վանպակ սրբով երգեցե՛կ Տիրոջը ,  
դե՛ւպե՛ս երանգա՛ն Գրիգորո՛ւնեան մատուցելով ամէն ինչի Բաճար (Հմմտ. Եփս 5, 19-20):

